

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ

ԴԱՍԸՆԹԱՑ 3

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
/քննության հարցերի պատասխաններ/

Դեկտեմբեր 2022թթ.

ԲԱԺԻՆ Ա. Պատասխաններ

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1	<i>դ</i>
2	<i>դ</i>
3	<i>ա</i>
4	<i>դ</i>
5	<i>բ</i>
6	<i>զ</i>
7	<i>բ</i>
8	<i>զ</i>
9	<i>դ</i>
10	<i>ա</i>
11	<i>ա</i>
12	<i>դ</i>
13	<i>զ</i>
14	<i>բ</i>
15	<i>զ</i>
16	<i>զ</i>
17	<i>ա</i>
18	<i>ա</i>
19	<i>դ</i>
20	<i>զ</i>
21	<i>բ</i>
22	<i>դ</i>
23	<i>ա</i>
24	<i>դ</i>
25	<i>զ</i>

Հարցը և պատասխանի ճիշտ տարբերակը

1. **Ստորև թվարկվածներից ո՞րը քաղաքացիական օրենսդրության սկզբունք չէ.**
դ/ տնտեսավարությունը:

2. **Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝**

դ/ գույք օգտագործելուն, ապրանքներ վաճառելուն, աշխատանքներ կատարելուն կամ ծառայություններ մատուցելուն ուղղված անձի ինքնուրույն և իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը շահույթ ստանալն է:

3. **Վստահության վրա հիմնված ընկերակցության (կոմանդիտային ընկերակցության) մասնակից ավանդատուները (կոմանդիտիստները)՝**

ա/ լիակատար ընկերների հետ միասին իրենց ներդրած ավանդների գումարների սահմաններում կրում են ընկերակցության գործունեության հետ կապված վնասների ռիսկը և չեն մասնակցում ընկերակցության իրականացրած ձեռնարկատիրական գործունեությանը,:

4. **Հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը, որը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի ինչպի՞սի պատասխանատվություն է կրում դուստր ընկերության հետ.**

դ/ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար:

5. **Ստորև թվարկվածներից ո՞րն արժեթուղթ չէ.**

բ/ բաժնեմասը:

6. **Ներքոհիշյալ գործարքներից որո՞նք են համարվում բաժնետիրական ընկերության կողմից կնքվող խոշոր գործարքներ՝**

գ/ մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը:

7. **Սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող տարրերից մեկը գույքն իր հայեցողությամբ տիրապետելու սեփականատիրոջ իրավագործությունն է, որն իրենից ներկայացնում է՝**

բ/ գույքը փաստացի տիրապետելու, այն իր մոտ պահելու իրավաբանորեն ապահովված հնարավորություն, որը չի առնչվում այդ գույքն օգտագործելուն:

8. Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը՝
զ/ պահպանում է իր ուժը:

9. Պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ այն անպատշաճ կատարելու դեպքում պայմանագրում տուժանքներ նախատեսելիս պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել՝
դ/ տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:

10. Բենեֆիցիարի (պարտատիրոջ) հանդեպ երաշխիք տված անձի (բանկի, այլ վարկային հաստատության կամ ապահովագրական կազմակերպության)՝ երաշխիքով նախատեսված պարտավորությունը՝
ա/ ինքնուրույն է և անկախ է հիմնական պարտավորությունից, որի կատարման ապահովման համար այն տրվել է, եթե նույնիսկ երաշխիքում վկայակոչվում է այդ պարտավորությունը:

11. Եթե վաճառողն ապրանքի թերությունների մասին նախապայման չի սահմանում, ապա գնորդը, ում հանձնված է անպատշաճ որակի ապրանքը, իրավունք ունի վաճառողից, իր ընտրությամբ, պահանջել՝
ա/ համաչափ պակասեցնելու ապրանքի գինը կամ ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները կամ հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կրած ծախսերը:

12. Ապրանքների մանրածախ առուվաճառքի դեպքում պատշաճ որակի ոչ պարենային ապրանքն իրեն հանձնելու պահից 14 օրվա ընթացքում վաճառողին վերադարձնելու կամ այն փոխարինելու գնորդի պահանջը ենթակա է բավարարման, եթե՝
դ/ ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրա սպառողական հատկանիշները, և առկա են ապրանքը հենց այդ վաճառողից ձեռք բերելու մասին ապացույցներ:

13. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը պետք է նախատեսի վարձավճարի չափ: Այն դեպքում, երբ շենքի կամ շինության վարձակալության պայմանագրում բացակայում է վարձավճարի չափի մասին պայմանը, ապա՝
զ/ շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը համարվում է չկնքված, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 440 հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ գնի որոշման կանոնները ենթակա չեն կիրառման:

14. Կապալառուն շինարարական կապալի պայմանագրով աշխատանքներ իրականացնելիս՝

բ/ իրավունք չունի օգտագործել պատվիրատուի տրամադրած նյութերը և սարքավորումները կամ կատարել նրա ցուցումները, եթե դրանք կարող են հանգեցնել կողմերի համար պարտադիր շրջակա միջավայրի պահպանության ու շինարարական աշխատանքների անվտանգության պահանջների խախտման, քանի որ կապալառուն է պատասխանատվություն կրում այդ պահանջները չկատարելու համար:

15. Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝

գ/ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով:

16. Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրով տրամադրված ֆինանսավորման համար զիջման առարկա կարող է լինել՝

գ/ ինչպես այն դրամական պահանջը, որի վճարման ժամկետը վրա է հասել (ներկա պահանջ), այնպես էլ դրամական միջոցներ ստանալու՝ ապագայում ծագելիք իրավունքը (ապագա պահանջ):

17. Ավանդներում դրամական միջոցներ ներգրավելու իրավունք չունեցող անձի կողմից քաղաքացուց ավանդ ընդունելու դեպքում՝

ա/ ավանդատուն կարող է պահանջել անհապաղ վերադարձնելու ավանդի գումարը, ինչպես նաև վճարելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված տոկոսները (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքներով) և տոկոսների գումարից բացի՝ հատուցելու ավանդատուին պատճառված վնասները:

18. Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ բանկային հաշվի պայմանագրով բանկը՝

ա/ կարող է հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործել՝ երաշխավորելով հաճախորդի՝ այդ միջոցներն անխոչընդոտ տնօրինելու իրավունքը:

19. Անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ՝

դ/ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

20. Ստորև թվարկվածներից ո՞րը գործատուի նախաձեռնությամբ աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմք չէ.

գ/ հարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքը:

21. Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում արդյոք աշխատողն իրավունք ունի հետ վերցնելու աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը, և եթե՝ այո, ապա ինչ ժամկետում.

բ/ այո, աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ նշված ժամկետից հետո նա կարող է ծանուցումը հետ վերցնել միայն գործատուի համաձայնությամբ:

22. Վարչարարության հիմնարար սկզբունքներից է առավելագույնի սկզբունքը: Ստորև նշվածներից ո՞րն է համապատասխանում այդ սկզբունքի բովանդակությանը.

դ/ վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում:

23. Եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը օրենքի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա՝ ա/ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը:

24. Ներքոնշյալ սուբյեկտներից ով չի կարող հանդիսանալ «Մնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սնանկության վարույթի պարտապան.

դ/ բանկը և վարկային կազմակերպությունը:

25. «Մնանկության մասին» ՀՀ օրենքը սահմանում է վճարային պարտավորությունն անվիճելի համարելու որոշակի հիմքեր: Նշվածներից ո՞րն է վճարային պարտավորությունը անվիճելի համարելու «Մնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմքերից մեկը.

գ/ պարտապանը չի առարկում վճարային պարտավորության դեմ, կամ եթե առարկում է դրա դեմ՝ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը:

ԲԱԺԻՆ Բ. Պատասխաններ

Խնդիր 1.

Հարց 1. Արդյո՞ք խախտվել են խոշոր գործարքների կնքմանը վերաբերող կարգավորումները՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և «Բլեքոուք Կապիտալ» ՓԲԸ-ի կանոնադրության պահանջների տեսանկյունից: Որո՞նք են խոշոր գործարքների անկավերության հիմքերը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը:

Նախ, քննարկվող խնդրի պարագայում 2022թ. նոյեմբերի 5-ին «Բլեքոուք Կապիտալ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենը «Իսթեյթ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ի հետ կնքում է Անշարժ Գույքի առուվաճառքի պայմանագիրը, որի գինը կազմում է 750.000.000 ՀՀ դրամ: Միննույն ժամանակ, նույն օրը Կողմերը կնքում են նաև համապատասխան վարկային և գրավի պայմանագրեր, որոնցով գրավադրվում է գնված Անշարժ Գույքը, «Բլեքոուք Կապիտալ» ՓԲԸ-ին պատկանող և 200.000.000 ՀՀ դրամ արժեքով այլ ակտիվները, ինչպես նաև վարկային պայմանագրով 750.000.000 ՀՀ դրամը Բանկն անմիջապես փոխանցում է «Իսթեյթ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ի հաշվեհամարին: Ստացվում է, որ կողմերը կնքում են թվով **երեք փոխկապված գործարքներ**, որոնք կապված են «Բլեքոուք Կապիտալ» ՓԲԸ-ի կողմից անշարժ գույքի ձեռքբերման, վարկային պայմանագրի առարկա հանդիսացող գումարի ձեռքբերման, ինչպես նաև գույքի օտարման, այն է՝ գրավ դնելու արդյունքում այդ հնարավորության առաջացման հետ: Հետևաբար, այս դեպքում ակներև է, որ գործ ունենք մի քանի փոխկապված խոշոր գործարքի հետ, քանի որ դրանց ընդհանուր արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը, այն է՝ ընդհանուր արժեքը կազմում է 1.700.000.000 ՀՀ դրամ, իսկ 2022թ. նոյեմբերի 5-ի դրությամբ «Բլեքոուք Կապիտալ» ՓԲԸ-ի ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 1.000.000.000 ՀՀ դրամ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

Ըստ խնդրի փաստական տվյալների՝ իր հերթին «Բլեքոուք Կապիտալ» ՓԲԸ-ի կանոնադրության համաձայն՝ «Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

Այսինքն՝ Ընկերության կանոնադրությամբ նախատեսված է խոշոր գործարքների կնքման առավել խիստ կարգ, քանի որ անհրաժեշտ է ստանալ ոչ թե ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների 3/4-ի համաձայնությունը, այլ բոլոր տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ի համաձայնությունը:

Փաստորեն այս դեպքում քննարկվող երեք փոխկապված գործարքները կնքելիս դրանցից յուրաքանչյուրի դեպքում անհրաժեշտ էր ստանալ ընդհանուր ժողովում Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ի համաձայնությունը: Մինչդեռ խնդրի փաստական տվյալների համաձայն՝ 2022 նոյեմբերի 1-ին տեղի ունեցած «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովում միայն «Վենգուարդ Հոլդինգս» ՓԲԸ-ն է մասնակցում և միայն վերջինս է տալիս իր «անվերապահ» համաձայնությունը «Իսթեյթ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ի հետ Անշարժ Գույքի ձեռքբերման պայմանագրի կնքման վերաբերյալ: Ընդ որում, ուշագրավ է, որ քննարկվում է գործարքներից բացառապես Անշարժ գույքի ձեռքբերման պայմանագրի կնքման հնարավորությունը, և բացարձակապես չեն քննարկվում մյուս երկու պայմանագրերը: Ավելին՝ միայն «Վենգուարդ Հոլդինգս» ՓԲԸ-ն է մասնակցում ժողովին և համաձայնություն տալիս մեկ գործարքի կնքմանը, այն դեպքում, երբ վերջինիս պատկանում են տեղաբաշխված բաժնետոմսերի միայն 68,13%-ը, որը տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ը չէ (պետք է լինի առնվազն 75%-ը):

Այնուհետև անհրաժեշտ է քննարկել խոշոր գործարքն անվավեր ճանաչելու պայմանները:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Ընկերության հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջներն Ընկերության կողմից չպահպանվելու մասին:

Վկայակոչված նորմից հետևում է, որ խոշոր գործարքն ինքնին անվավեր գործարք չէ և այն կարող է անվավեր ճանաչվել բացառապես այն դեպքում, երբ գործարքի մյուս կողմը գործել է անբարեխիղճորեն, մասնավորապես՝ գործարքի կնքման պահին գիտեր կամ պարտավոր էր իմանալ խոշոր գործարք կնքելու պահանջները համապատասխան Ընկերության կողմից պահպանված չլինելու մասին:

Տվյալ դեպքում Ընկերության հետ գործարքները կնքած կողմերը՝ «Իսթեյթ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ն և Բանկն ակնհայտորեն պետք է տեղյալ լինեին խոշոր գործարքի կնքման կանոնները Ընկերության կողմից պահպանված չլինելու մասին, քանի որ վերջինս կողմերին փոխանցել էր իր ընդհանուր ժողովի արձանագրության թղթային տարբերակը: Բացի այդ, մինչև վիճարկվող գործարքի կնքումը «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ն և «Իսթեյթ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ն «ՖինԲանկ» ՓԲԸ-ի հետ մտադրությունների մասին արձանագրություն կնքելիս փոխանակվել էին համապատասխան կորպորատիվ և հաշվապահական փաստաթղթերով՝ ներառյալ նաև «Բլեքոք Կապիտալ» ՓԲԸ-ի կանոնադրությունը, վերջին երեք տարիների ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև բալանսները/հաշվապահական հաշվեկշիռները:

Վկայակոչված փաստական հանգամանքների պայմաններում վիճարկվող փոխկապված երեք գործարքներն ենթակա են անվավեր ճանաչման:

Պատասխան /հարց 2/

Հարց 2. Արդյո՞ք Վարկային Պայմանագրի և Գրավի պայմանագրի պայմանները համապատասխանում են գործող օրենսդրական կարգավորումներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են նույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ նույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

Տվյալ դեպքում վարկային պայմանագրով կողմերը նախատեսել են տրամադրվող գումարի չափը՝ 750.000.000 ՀՀ դրամը, տոկոսադրույք՝ 37% տարեկան փաստացի տոկոսադրույք, մարման ժամանակացույց՝ 76 ամիս, ինչպես նաև վարկի մայր գումարի և հաշվեգրված տոկոսների չվճարման դեպքում տույժ՝ 0,26%-ի չափով յուրաքանչյուր կետանցված օրերի համար:

Նախ անհրաժեշտ է նշել, որ տարեկան փաստացի տոկոսադրույքի մասով պայմանագրային նորմը համապատասխանում է օրենսդրական կարգավորումներին, քանի որ ՀՀ վճարեկ դատարանը, անդրադառնալով վերը վկայակոչված նորմերի վերլուծությանը, գտել է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ փոխառությանը վերաբերող 46-րդ գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում, եթե կողմերն այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին: Ընդ որում, օրենսդիրը, ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածներում ամրագրված պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս պայմանները որոշել իրենց հայեցողությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 47-րդ գլխի իմպերատիվ նորմերով (*ըստ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Եղեգնաձորի մասնաճյուղի հայցի ընդդեմ Արթուր Մարգարյանի, Արտակ Հարությունյանի և Էրրորդ անձինք Արտաշ Արտաշյանի, Սուսաննա Ստեփանյանի և Նելլի Արտաշյանի՝ 2.417.218,7 ՀՀ դրամ վարկի ընդհանուր պարտքի և 48.400 ՀՀ դրամ վճարված պետական տուրքի գումարների բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործով Վճարեկ դատարանի 24.07.2009 թվականի թիվ ԱՎԴԿ/0145/02/08 որոշումը*):

Հետևաբար, տարեկան տոկոսադրույքի մասով փոխառության հարաբերությունները կարգավորող առավելագույն շեմը կիրառելի չէ (24% տոկոսադրույքն է առավելագույնը):

Ինչ վերաբերում է պայմանագրով նախատեսված վարկի մայր գումարի և հաշվեգրված տոկոսների չվճարման դեպքում վճարման ենթակա օրական տույժին՝ 0,26%-ի չափով, ապա նշված պայմանը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգավորմանը: Մասնավորապես՝ պայմանագրով որոշված **տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Հետևաբար յուրաքանչյուր կետանցված օրվա համար վճարման ենթակա տույժի առավելագույն տոկոսադրույքը չի կարող գերազանցել 0,13%-ը (48/365), մինչդեռ կողմերը նախատեսել են 0,26%-ի չափով:

Ավելին՝ նույն հոդվածի 2-րդ կետի իմաստով այդ պայմանը խախտող համաձայնությունն առ ոչինչ է, հետևաբար պայմանագրի այդ պայմանը օրենքի ուժով առ ոչինչ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 234-րդ հոդվածը սահմանում է գրավի պայամանագրի կնքման ձևը, պայմանագրի էական պայմանները, իսկ դրանք չպահպանելու դեպքում նաև անվավերությունը: Այսպես՝ գրավի պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, իսկ անշարժ գույքի գրավի դեպքում՝ ենթակա է նոտարական վավերացման և դրանից բխող գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման: Գրավի պայմանագրում պետք է նշվեն կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը, չափն ու կատարման ժամկետը:

Տվյալ դեպքում կողմերը անշարժ գույքի և 200.000.000 ՀՀ դրամ արժեքով այլ ակտիվների գրավադրման պայմանագիրը կնքել են նոտարական վավերացմամբ, անշարժ գույքի մասով գրավի իրավունքը ենթարկել են պետական գրանցման, իսկ խնդրի պայմաններից էլ հետևում է, որ մնացած մասով ևս պահպանվել են էական պայմանները, այն է՝ պարզ են կողմերի անվանումները, գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը, չափն ու կատարման ժամկետը:

Խնդիր 2

Պատասխան /հարց 1/

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջև ծագած իրավահարաբերության բնույթը: Ի՞նչ կարգով պետք է կնքվի փոխառության պայմանագիրը (պայմանագրի ձևը, պայմանները, տոկոսների չափը): Արդյո՞ք վավեր է կողմերի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, հիմնավորեք պատասխանը:

Նախևառաջ պետք է նշել, որ կողմերի նպատակն ի սկզբանե ուղղված է եղել փոխառության պայմանագրի կնքմանը և համապատասխան իրավահարաբերության առաջացմանը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սահմանում է փոխառության

պայմանագրի հասկացությունը, պայմանները և կնքման կարգը (877-885 հոդվածներում): Այսպես, փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից (հիմք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդված): Միևնույն ժամանակ, փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր, իսկ ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ: Ավելին՝ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առոչինչ է:

Հետևաբար փոխառության պայմանագիրը պետք է ձևակերպվի գրավոր, գումարի ստացումը պետք է հավաստվի փոխառուի կողմից տրված փաստաթղթով՝ օրինակ ստացականով, իսկ նշված պահանջները չպահպանելը հանգեցնում է այդ պայմանագրի առոչնչության: Միաժամանակ, եթե անգամ կողմերը կատարեն նշված պայմանները, պայմանագիրը չի համարվում կնքված քանի դեռ գումարը չի փոխանցվել, այսինքն՝ գումար փոխանցելու պարտավորության ստանձնումը դեռ փոխառության պայմանագրի կքնում չէ:

Փոխառության պայմանագիրը կարող է լինել ինչպես «հատուցելի», այնպես էլ՝ «անհատուց»: Ընդ որում, փոխառության պայմանագիրը, որպես կանոն, համարվում է տոկոսով, եթե կողմերը չեն նախատեսում դրա անտոկոս բնույթը: «Հատուցելիությունը» դրսևորվում է բացի ստացված գումարը վերադարձնելու պարտավորության կատարումից, նաև վերադարձման ենթակա գումարի նկատմամբ պայմանագրով նախատեսված տոկոսները վճարելով: Տվյալ դեպքում, փոխառության պայմանագրի պայմաններից մեկն էլ կազմում է վճարման ենթակա տոկոսների չափը և դրանք հաշվարկելու կարգը: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Սակայն, այդ տոկոսների չափը չի կարող կամայական բարձր լինել, այլ պետք է չգերազանցի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկ, այսինքն՝ 24% տոկոսադրույքը (հիմք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդված):

Քննարկվող պարագայում կողմերի կամքը միտված է եղել փոխառության պայմանագրի կնքմանը, սակայն կողմերը պատշաճ կեպով չեն ձևակերպել այդ պայմանագիրը, մասնավորապես այն չի կնքվել գրավոր կերպով, գումարի ստացումը չի հավաստվել որևէ փաստաթղթով՝ թեկուզև փոխառուն ստացել է ընդհանուր 30.000 ԱՄՆ դոլար: Բացի այդ, փոխատուն նախատեսել է օրենքով սահմանված շեմը գերազանցող տոկոսների չափ՝ 35% տոկոսադրույք, ինչը ևս իրավաչափ չէ: Փաստորեն այս պայմաններում նշված պայմանագիրն ինքնին առոչինչ է, քանի որ կողմերը խախտել են այն կնքելու կարգը:

Դրա փոխարեն կողմերը կնքել են շինծու գործարք՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր՝ քողարկելով իրենց միջև առկա փոխառության և գրավի հարաբերությունը, քանի որ հետագայում կողմերի կամքը միտված է եղել հակընդդեմ հայցվոր Բեռնիկ Նազրվանյանին պատկանող բնակելի տունը գրավ դնելուն, ինչը կապահովեր փոխառության պարտավորության պատշաճ կատարումը: Շինծու գործարքը կնքվում է մեկ այլ գործարքի քողարկման նպատակով, և օրենքի ուժով համարվում է առոչինչ: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ կետ): Այսինքն, այս իրավիճակում կիրառման ենթակա են դառնում փոխառության և գրավի իրավահարաբերությունները կարգավորող նորմերը, իսկ ինքնին առուվաճառքի պայմանագիրը համարվում է առոչինչ:

Պատասխան /հարց 2/

Հարց 2. Ու՞մ հայցն է ենթակա բավարարման և ինչու՞: Արդյո՞ք կողմերի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի նկատմամբ դատարանը կկիրառի առոչնչության հետևանքներ:

Չնայած վերը նշված հանգամանքներին, որոնք ակնհայտ են դարձնում կողմերի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի առոչնչությունը՝ քննարկվող պարագայում ենթակա է բավարարման սկզբնական հայցվորի հայցը, իսկ հակընդդեմ հայցը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանություններով:

Նախևառաջ, այնպես ինչպես ցանկացած հայց, շինծու գործարքի նկատմամբ առոչնչության հետևանքներ կիրառելու մասին հայցապահանջը կարող է ներկայացվել միայն օրենքով նախատեսված որոշակի ժամկետի ընթացքում, այն է՝ հայցային վաղեմության ժամանակահատվածում: Բոլոր այն դեպքերում, երբ պատասխանողը մատնանշում է հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու հանգամանքը, դատարանը պարտավոր է քննարկել այդ միջնորդությունը և հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու դեպքում՝ կայացնել հայցը մերժելու մասին դատական ակտ:

Տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 1-ին կետի ուժով առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել դրա կատարման օրվանից տասը տարվա ընթացքում: Քննարկվող իրավիճակում կողմերը շինծու գործարքը՝ անշարժ գույքի առուվաճառքի մասին պայմանագիրը կնքել են 24.07.2010 թվականին, որպիսի պայմաններում դրա նկատմամբ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող էր դատարան ներկայացվել տասը տարվա ընթացքում՝ մինչև 25.07.2020 թվականը: Խնդրո առարկա իրավիճակում պատասխանող Բեռնիկ Նազրվանյանը հակընդդեմ հայցն ընդդեմ Վարազդատ Կիրակոսյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, դատարան է նենկայացրել միայն 2022 թվականի նոյեմբերի 18-ին՝ բաց

թողնելով հայցային վաղեմության տասը տարվա ժամկետը: Իր հերթին սկզբնական հայցով հայցվոր Վարազդատ Կիրակոսյանը միջնորդել է կիրառել հայցային վաղեմության ժամկետը՝ նշելով որ լրացել է եռամյա ժամկետը: Ճիշտ է, վերջինիս նշած հայցային վաղեմության եռամյա ընդհանուր ժամկետը ենթակա չէ կիրառման, սակայն այնուամենայնիվ լրացել է հատուկ հայցային վաղեմության տասնամյա ժամկետը, ուստիև հակընդդեմ հայցի մասով դատարանը պետք է կայացնի այն մերժելու մասին դատական ակտ:

Ինչ վերաբերում է սկզբնական հայցին, ապա այն տվյալ իրավիճակում կբավարարվի, քանի որ Վարազդատ Կիրակոսյանի հայցի մասով ներկայացված գրավոր ապացույցը, որը բովանդակում է նաև գրառում առ այն, որ Բեռնիկ Կիրակոսյանը ամբողջությամբ ստացել է գումարը նոտարական գրասենյակում, արդեն իսկ բավարար ապացույց է բնակելի տան անվանական սեփականատիրոջ հայցը բավարարելու համար՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Բեռնիկ Կիրակոսյանը գրկվում է իր հակընդդեմ հայցը հարուցելու իրավունքից՝ հայցային վաղեմության ժամանակահատվածը լրացած լինելու հիմքով: Ինչպես վկայում են նաև խնդրի փաստական հանգամանքները, տվյալ դեպքում Բեռնիկ Կիրակոսյանը չի տիրապետում այնպիսի գրավոր ապացույցի, որը հնարավորություն կտար վերջինիս ապացուցելու անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի առոչնչությունը՝ առանց այն դատական կարգով վիճարկելու իրավունքի իրացման:

Խնդիր 3

Պատասխան /Հարց 1/.

Հարց 1: Վերլուծել կողմերի միջև ծագած հարաբերության բնույթը: Արդյո՞ք համաձայնակի առկայությունը կամ վարձատուի կողմից իր պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը կամ չկատարումը հիմք է վարձակալի կողմից իր վարձավճարի վճարման պարտավորության կասեցման համար: Արդյո՞ք Պայմանագրի կնքումից առաջ Տարածքը թերություններով ընդունելը զրկում է Վարձակալին դրանք հետագայում վկայակոչելու հնարավորությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածով սահմանվում է վարձակալության պայմանագրի հասկացությունը, որի համաձայն՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 613-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձատուն պարտավոր է գույքը վարձակալին տրամադրել վարձակալության պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

Իր հերթին վարձակալը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 616-րդ հոդվածի 1-ին կետի ուժով պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճարը (վարձավճարը):

Տվյալ դեպքում քննարկվող իրավիճակում կողմերի միջև ծագել են վարձակալական իրավահարաբերություններ: Վարձատուն, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 613-րդ հոդվածի 1-ին կետով, ինչպես նաև կողմերի միջև կնքված պայմանագրով պարտավորվել է վարձակալին հանձնել պատշաճ տարածք, մասնավորապես՝ ըստ պայմանավորվածության Տարածքը պետք է ունենար պատշաճ շերտավարագույրներ և շրիշակներ, իսկ Տարածքի հատակը պետք է լինի սալիկապատված, պետք է ապահովված լիներ օդափոխության, ջրամատակարարման, գազամատակարարման, ջեռուցման և սառեցման համակարգերով, ինչպես նաև 24-ժամյա ինտերնետ ու ամենօրյա մաքրման ծառայություններով, լարանցումները պետք է հնարավորինս անտեսանելի լինեին և ունենար առնվազն երկու ավտոկայանատեղի՝ համապատասխան հասանելիությամբ: Ըստ խնդրի փաստական հանգամանքների՝ 2020թ. հունվարի 3-ին Վարձակալի կողմից Տարածքի ընդունումն իրականացնելիս հայտնաբերվում են Տարածքի որոշակի թերություններ, մասնավորապես՝ մի քանի սենյակներում շերտավարագույրների բացակայություն, մի շարք հատվածներում շրիշակների բացակայություն կամ վնասվածքներ, գրասենյակի կենտրոնական հատվածում հաղորդակցության լարերը թաքցված չեն: Չնայած այս թերությունների առկայությանը՝ Վարձակալն ընդունում է Տարածքը՝ ընդունելով Վարձատուի բանավոր հայտարարությունն առ այն, որ այդ թերությունները կվերացվեն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 614-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության հանձնված գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է պայմանագիրը կնքելիս, կա՛մ նախապես հայտնի են եղել վարձակալին, կա՛մ պետք է վարձակալի կողմից հայտնաբերվեին գույքը գննելիս կա՛մ պայմանագիր կնքելիս, կա՛մ գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգելիս:

Ստացվում է, որ խնդրո առարկա իրավիճակում բոլոր այն թերությունները, որոնք առկա են եղել մինչև վարձակալության պայմանագրի կնքումը և ակներև է, որ հայտնի են եղել Վարձակալին այլևս չեն կարող վկայակոչվել վերջինիս կողմից վարձավճարի վճարումը չիրականացնելու պատրվակով: Ավելին, այս կարգավորումն ունի իմպերատիվ բնույթ և կողմերը զրկված են այն պայմանագրում փոփոխելու կամ այլ կերպ շարադրելու իրավունքից, հետևաբար բոլոր վերը թվարկված թերությունները Վարձակալը ժամանակին նկատել ու ընդունել է, ուստիև զրկվում է դրանք հետագայում վկայակոչելու իր իրավունքից և չի կարող այդ հիմքով իր պայմանագրային պարտավորությունը չկատարել կամ ոչ պատշաճ կատարել (իրավիճակը կլիներ այլ, եթե այդպիսի թերությունների վերացման մասին հստակ մատնանշվեր որևէ գրավոր փաստաթղթում, օրինակ՝ էլեկտրոնային փոստային գրագրության կամ հանձնման ընդունման ակտի մեջ): Ինչ վերաբերում է Վարձատուին բանավոր հավաստիացումներին, որ նկատված թերությունները կվերացվեն, ապա դրանք չունեն ապացուցողական նշանակություն, քանի դեռ ձևակերպված չեն պատշաճ գրավոր ձևով՝ հանձնման-ընդունման ակտում:

Անդրադառնալով կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված վարձավճարը չվճարելու Վարձակալի պատճառաբանություններին՝ պետք է նշել հետևյալը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 616-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, վարձակալն իրավունք ունի պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե, հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, վարձակալության պայմանագրով նախատեսված օգտագործման պայմանները կամ գույքի վիճակը վատթարացել են:

Քննարկվող պարագայում գույքը վարձակալության վերցնելուց հետո ստեղծվել է համաճարակային իրավիճակ, որը շատ դեպքերում խափանել է տնտեսվարողների բնականոն գործունեությունը: Այս իրավիճակում վարձակալն օրենքի ուժով կարող էր վարձատուից պահանջել նվազեցնել վարձավճարի չափը, քանի որ ինչ-որ առումով Տարածքի օգտագործման որոշակի պայմաններ վատթարացել էին: Սակայն Վարձակալն ամեն դեպքում իրավասու չէր սեփական նախաձեռնությամբ նվազեցնելու վարձավճարը և պակաս վճարելու այն, քանի որ Տարածքը շարունակել է գտնվել իր տիրապետման և օգտագործման ներքո, ավելին՝ համաճարակի պայմաններում սահմանափակվել է անձանց մուտքը, սակայն այն իսպառ չի բացառվել: Տվյալ դեպքում Վարձակալը զրկված չի եղել Տարածքն օգտագործելուց և տիրապետելուց, որպիսի պայմաններում միակողմանիորեն վարձավճարը պակաս վճարելն իրավաչափ չէ:

Պատասխան /հարց 2/

Հարց 2: Ինչպի՞սի վճիռ կկայացվի դատարանի կողմից: Վերլուծել վարձավճարի վճարման պարտավորության կասեցման վերաբերյալ Պայմանագրի համապատասխան դրույթը՝ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պայմանագրերի մեկնաբանության կանոնների: Արդյո՞ք Պայմանագրի կնքումից հետո ծագած թերությունների (Վարձատուի կողմից պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ իրականացումը) առկայության պայմաններում վարձակալը կարող է չվճարել վարձավճարը:

Չնայած սույն խնդրի առաջին հարցի մասով շարադրված պատասխանի բովանդակությանը՝ դատարանը, ըստ էության, տվյալ դեպքում պետք է կայացնի Վարձատուի հայցը մերժելու վերաբերյալ դատական ակտ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 614-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձատուն պատասխանատվություն է կրում վարձակալության հանձնված գույքի օգտագործմանը լրիվ կամ մասնակիորեն խոչընդոտող թերությունների համար, եթե նույնիսկ վարձակալության պայմանագիրը կնքելիս նա չի իմացել այդ թերությունների մասին: Այդպիսի թերություններ հայտնաբերելիս վարձակալը, իր ընտրությամբ, իրավունք ունի՝

1) վարձատուից պահանջել անհատույց վերացնելու գույքի թերությունները կամ համաչափորեն իջեցնելու վարձավճարը, կամ հատուցելու գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2) վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը.

3) պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարձակալի պահանջների կամ վարձատուի հաշվին գույքի թերությունները վերացնելու նրա մտադրության մասին ծանուցված վարձատուն կարող է վարձակալին հանձնված գույքն անհապաղ փոխարինել պատշաճ վիճակում գտնվող նույնանման գույքով կամ անհատույց վերացնել գույքի թերությունները:

Բացի օրենսդրական նշված կարգավորումից, կողմերը վիճելի Պայմանագրում ներառել են նաև հետևյալ դրույթը՝ *«Եթե Վարձատուն չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ապա Վարձակալն իրավունք ունի չկատարել Պայմանագրով սահմանված իր վճարային պարտավորությունները մինչև Վարձատուի կողմից պարտավորությունների խախտման վերացումը»:*

Քննարկվող դրույթից ակնհայտ է, որ այն ունի կիրառման բավականին լայն սահմաններ, իսկ այդ դրույթը մեկնաբանելով դրանում պարունակվող բառերի ու արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ պարզ է դառնում, որ Պայմանագրի կնքումից ի հայտ եկած ցանկացած թերության համար Վարձակալը կարող է չկատարել իր պայմանագրային պարտավորությունը, այն է՝ չվճարել վարձավճարը:

Սույն խնդրի փաստերից բխում է, որ բացի ի սկզբանե եղած թերություններին, Տարածքի օգտագործման ընթացքում (այլ կերպ ասած, Պայմանագրի կնքումից հետո, որոնք չեն ընկներում առաջին հարցի շրջանակներում թվարկված բացառությունների շարքում) ի հայտ են եկել նաև մի շարք նոր թերություններ, այն է՝ օդափոխության համակարգի հաճախակի խափանումներ (սկզբում բացակայել էր), Վարձակալի տիրապետմանը հանձնված ավտոկայանատեղիները լինում են արգելափակված այլ ավտոմեքենաներով կամ դրանք զբաղեցված են Վարձակալի հետ չկապված անձանց

կողմից, ինչպես նաև Տարածքի հատակի և առաստաղի հատվածներում առկա են արտահոսքեր: Համակարգելով ամբողջ վերը նշվածը՝ կարելի է եզրահանգել, որ թվարկված թերություններն արդեն բավարար էին Վարձակալի կողմից վարձավճարը չվճարելու համար, քանի որ Պայմանագրի համապատասխան դրույթը թույլ է տալիս դա: Ավելին՝ Վարձակալը ՀՀ քաղաքացիական օրենսդրության կարգավորումներին համապատասխան նշված թերությունների առկայության մասին ևս ծանուցել է Վարձատուին, սակայն վերջինս չի կատարել գույքի թերություններն անհատույց վերացնելու կամ վարձավճարի չափը նվազեցնելու իր օրենսդրական պարտավորությունները: Ուստիս դատարանը պետք է կայացնի Վարձատուի հայցը մերժելու մասին դատական ակտ՝ վերը նշված պատճառաբանությամբ:

Խնդիր 4.

Պատասխան /Հարց 1/.

Հարց 1. Արդյո՞ք պահպանվել են աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական կարգավորումները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ, 13-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

Այսպիսով՝ գործատուն կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողին: Ընդ որում, որպես կարգապահական տույժ կարող է կիրառել նաև աշխատանքային պայմանագրի լուծում կարգապահական տույժը նաև անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում չեն համարվում՝ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ

կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում այդ դեպքերով պայմանավորված՝ աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության:

Վերլուծելով նշված իրավական նորմերը՝ կարելի է փաստել, որ գործատուն կարգապահական տույժը կիրառելիս պետք է հաշվի առնի խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը: Ավելին՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում ***աշխատողի մեղքով*** աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: Բացի այդ, ՀՀ աշխատանքային օրենսդրության իմաստով աշխատանքային կարգապահության խախտում չեն համարվում տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, ***դժբախտ պատահարների***, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում ***այդ դեպքերով պայմանավորված՝ աշխատողի աշխատանքի չներկայանալը*** կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը:

Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում ենթադրյալ կարգապահական խախտումը գնահատելիս և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս գործատուն պարտավոր է պարզել խախտման հանգամանքները, հասկանալ արդյոք առկա է աշխատողի մեղքը և նոր միայն գնահատել համապատասխան արարքը: Այս իսկ իրավաչափ նպատակի հետապնդման հիմքով օրենսդրությունը նախատեսում է մինչև կարգապահական տույժի կիրառումը աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելու գործատուի պարտականությունը՝ աշխատողին տրամադրելով ողջամիտ ժամկետ: Հակառակ պարագայում գործատուն չի կարող հասկանալ արարքում աշխատողի մեղքի առկայությունը կամ բացակայությունը: Եթե միայն գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության:

Մինչդեռ քննարկվող խնդրի պարագայում ակներև է, որ գործատուն աշխատողին կարգապահական պատասխանատվության է ենթարկել առանց կատարելու օրենքով սահմանված իր պարտականությունները, մասնավորապես՝ անհիմն ենթադրել է, որ

աշխատողը անհարգելի պատճառով չի ներկայացել, չի փորձել անգամ պարզել չներկայանալու պատճառները, գրավոր կերպով չի պահանջել աշխատողի գրավոր բացատրությունը և աշխատողին միանգամից ենթարկել է ամենախիստ կարգապահական տույժին: Մինչդեռ աշխատողը դժբախտ պատահարի հետևանքով գտնվել է բժշկական հաստատությունում, անգիտակից վիճակում, որում ակհնայտորեն բացակայել է աշխատողի մեղքը, իսկ դա անգամ չի կարող համարվել կարգապահական խախտում: Հետևաբար գործատուն խախտել է աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու օրենքով սահմանված հիմքերն ու կարգը:

Պատասխան /Հարց 2/.

Հարց 2. Արդյո՞ք Գործատուն իրավունք ունի լուծելու Աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը քննարկվող իրավիճակում: Ներկայացրե՞ք համապատասխան հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման պայմաններն ու կարգը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու:

Այսպիսով, օրենսդիրը սահմանում է աշխատողին աշխատանքից ազատելու գործատուի իրավունքը այն դեպքում, երբ աշխատողը անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքի չի ներկայանում: Հարկ է նաև նկատել, որ այս դեպքի համար նախատեսվում է նաև բացառություն աշխատողին ծանուցելու գործատուի պարտականությունից, քանի որ քննարկվող իրավիճակում գործատուն անգամ ազատված է աշխատողին ծանուցելու պարտականությունից: Այսինքն, գործատուն, պարզելով, որ աշխատողը չի ներկայացել ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում և չի ունեցել չներկայանալու հարգելի պատճառ, կարող է առանց վերջինիս ծանուցելու լուծել համապատասխան աշխատանքային պայմանագիրը:

Այուամենայնիվ, քանի դեռ գործատուն չի պարզում աշխատողի չներկայանալու պատճառը, օրենսդրական քննարկվող հիմքով չի կարող աշխատանքից ազատել աշխատողին: Հարկ է նաև նշել, որ այսպիսի հիմքի առկայության դեպքում գործատուն կարող է՝

- կամ կիրառել կարգապահական տույժի վարույթը և աշխատողին ազատել աշխատանքից՝ որպես տույժ կիրառելով նշված լիազորությունը,

- կամ կարող է քննարկվող հիմքով աշխատանքից ազատելու իր իրավասությունն օգտագործել միանգամայնորեն անկախ կարգապահական տույժի վարույթից:

Ընդ որում, երկրորդ դեպքում այլևս չի էլ ծանուցում պայմանագրի լուծման իր մտադրության մասին:

Քննարկվող խնդրի պարագայում գործատուն չէր կարող աշխատողին ազատել նաև օրենսդրական նշված հիմքով՝ առանց կարգապահական վարույթի կիրառման, քանի որ գործատուն չէր պարզել աշխատողի չներկայանալու պատճառների բնույթը: Եթե գործատուն փորձեր պարզել այդ պատճառները, ապա միանգամայն կբացատրեր «անհարգելիությունը», ուստիև այս դրույթը ևս ենթակա չէր կիրառման: